



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ



ԴԵԿՏԵՄԲԵՐ 2015- ՀՈՒՆՎԱՐ 2016

ԹՈՂԱՐԿՈՒՄ N 1

## ԱՊԱԳԱ ԿԱՌԱՎԱՐԻՉ

Միրելի՛ ուսանողներ,

Ողջունում եմ ուսանողական ամսաթերթ հրատարակելու ձեր նախաձեռնությունը: Հուսով եմ, որ «Ապագա կառավարիչը» կդառնա ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսանողական կյանքի յուրօրինակ խոսափողը և կներկայացնի ոչ միայն Ակադեմիայի ուսանողական առօրյան, կրթօջախում կազմակերպվող բազմազան միջոցառումները, այլև կբարձրացնի այսօրվա ուսանողին հուզող խնդիրներ՝ փորձելով գտնել դրանց պատասխանները:

Վստահ եմ, որ Կառավարման ակադեմիայում կառավարչական ունակությունների և մասնագիտական գիտելիքների հետ մեկտեղ դուք ձեռք եք բերում նաև պետականամետ մտածողություն, ինչը խիստ անհրաժեշտ է ինչպես մեր երկրի պետական համակարգի ապագա կառավարիչներին, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու: Այդ մտածողության շնորհիվ ամսաթերթի հրատարակումները կլինեն անաչառ և երկրի ապագայով մտահոգ քաղաքացու՝ հանրությանն ուղղված խոհեր: Հիշեք Վաչագան Բարեպաշտ արքային. նա պետականությունը համարում էր շատ ավելի կարևոր, քան իր սեփական իշխանությունը:

Եղե՛ք համարձակ, մի՛ շրջանցեք խոչընդոտները, այլ հաղթահարեք դրանք: «Ապագա կառավարիչը» ձեր առաջին ինքնուրույն քայլերից է պետության թեկուզ փոքրիկ, բայց կարևոր պտուտակը դառնալու ճանապարհին: Այն վկայելու է, որ դուք այս համակարգում ասելիք ունեք:



Արսեն Լոբյան,  
ՀՀ ՊԿԱ ռեկտոր,  
բժշկական գիտությունների թեկնածու



Ձուլիեսա Նիկողոսյան,  
ՀՀ ՊԿԱ ՈԻԽ նախագահ,  
Քաղաքագիտության ամբիոնի  
2-րդ կուրսի մագիստրանտ

Միրելի՛ ուսանողներ,

Արդի գլոբալացվող աշխարհում, երբ ամեն բույս փոխվում են աշխարհաքաղաքական զարգացումները և պետությունները բախվում են բազմաբնույթ մարտահրավերների, ևս մեկ անգամ առաջ է գալիս այն գաղափարը, որ յուրաքանչյուր պետության զարգացման և ազգային անվտանգության գլխավոր երաշխավորը մրցունակ կրթությամբ և ակտիվ երիտասարդությունն է: Այսօր ՀՀ պետական կառավարման ակադեմիայում ուսանում են այն երիտասարդները, ովքեր ապագայում լինելու են ՀՀ պետականության կրողները և պետք է գործեն ի շահ Հայաստանի Հանրապետության:

Ակադեմիան, ի դեմս ուսանողական խորհրդի, ստեղծել է մի հարթակ, որը հնարավորություն է տալիս ուսանողներին ինքնադրսևորվել, կյանքի կոչել սեփական ծրագրերն ու բուռն նախաձեռնություն ունենալ տարատեսակ միջոցառումների իրականացմանը:

«Ապագա կառավարիչ» ամսաթերթը վերոհիշյալի վկայությունն է: Շնորհավորում եմ բոլորիս առաջին համարի թողարկման կապացությամբ ու մաղթում նորանոր գաղափարներ և դրանք կյանքի կոչելու ուղիներ:





# ԱՊԱԳԱ ԿԱՌԱՎԱՐԻՉ



*Վարուժան Ներսեսյան,  
ՀՀ նախագահի օգնական,  
ՀՀ ՊԿԱ շրջանավարտ*

## «Զգտում, աշխատասիրություն, նպատակասլացություն»

### Այս հատկություններով պետք է առաջնորդվի յուրաքանչյուրը»

*-Պարոն Ներսեսյան, Դուք ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առաջին տարիների շրջանավարտներից եք: Ինչո՞ւ որոշեցիք ընդունվել Ակադեմիա:*

-1996 թվականին, երբ ես ընդունվեցի Կառավարման ակադեմիա (այն ժամանակ Կառավարման դպրոց), նորանկախ Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգի համար կադրեր պատրաստելու նպատակով ստեղծված այս հաստատությունն ընդամենը երկրորդ անգամ էր դռները բացում դիմորդների առջև: Այն ժամանակ ուսուցումն իրականացվում էր միայն իրավագիտություն և տնտեսագիտություն մասնագիտություններով: Ես սովորում էի Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում և, ընկերներիցս լսելով Կառավարման դպրոցի մասին, որոշեցի ուսանել նաև այստեղ: Ասեմ, որ երբևէ չեմ ավստսել որոշմանս համար: Այստեղ ես ձեռք բերեցի ոչ միայն պետական կառավարման համակարգում աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, այլև շատ լավ ընկերներ:

*- Ի՞նչ դեր ունեցավ Կառավարման դպրոցը Ձեր հետագա գործունեության մեջ:*

- Իմ աշխատանքային գործունեության ընթացքում ես տարբեր պաշտոններ եմ վարել, հիմնականում աշխատել եմ դիվանագիտական ոլորտում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ դեսպանություններ, միջազգային կառույցներ, նաև՝ ՀՀ Ազգային ժողով: Բնականաբար, Կառավարման դպրոցում ձեռք բերած կառավարչական հմտությունները, ինչպես նաև ՀՀ օրենսդրության իմացությունը, իրավական և այլ բնույթի գիտելիքները մեծապես օգնեցին ինձ կարիերայի ընթացքում: Շատ կարևորում եմ նաև այն հանգամանքը, որ Կառավարման դպրոցում ուսումնառության տարիները լայնացրին իմ մտահորիզոնը:

*- Ո՞րն է Ձեր ամենավառ հիշողությունը այդ տարիներից:*

- Գուցե զարմանալի թվա, սակայն այն ցուրտ ու մութ տարիներին մենք առանձնակի ոգևորությամբ էինք սովորում: Հիշում եմ, թե ինչպես քննություններից մեկը, որն ընդունում էր պարոն Խոսրով Հարությունյանը, տևեց մինչև ուշ գիշեր, իսկ քննասենյակը, բնականաբար, չէր ջեռուցվում: Դա էլ բավական չէր, լույսը անջատվեց, և մենք քննությունը շարունակեցինք մոմի լույսի տակ: Իրականում սովորել ցանկացող մարդուն ոչինչ չի կարող խանգարել:

*- Ձեր կարծիքով, ինչպիսի՞ հատկություններով օժտված մարդը կարող է հասնել հաջողությունների:*

- Զգտում, աշխատասիրություն, նպատակասլացություն. այս հատկություններով պետք է առաջնորդվի յուրաքանչյուրը, եթե ձգտում է հաջողության հասնել կյանքում և աշխատանքում:

*- Դուք դասավանդում եք Ակադեմիայում և շփվում ուսանողների հետ: Ինչպիսի՞ն է այսօր մեր երիտասարդությունը: Նրանց մեջ տեսնո՞ւմ եք ապագա կառավարիչների:*

-Որպես այս հաստատության շրջանավարտ՝ մեծ խանդավառությամբ եմ դասավանդում Կառավարման ակադեմիայում: Շփվելով ուսանողների հետ, ծանոթանալով նրանց մտահորիզոնին, գաղափարներին, լսելով նրանց տեսակետները՝ կարծում եմ, որ այսօրվա ուսանողներն ուսումնառությունից հետո կարող են իրենց դրսևորել թե՛ պետական և թե՛ մասնավոր ոլորտներում: Ակնհայտ է նրանց ձգտումը՝ էլ ավելի խորացնելու իրենց գիտելիքները: Վստահ եմ, որ ավարտելուց հետո նրանց մեծ հեռանկարներ են սպասվում:

*- Պարոն Ներսեսյան, մի քանի օր առաջ նշվեց Ուսանողների միջազգային օրը: Ի՞նչ կմաղթեք Ձեր ուսանողներին այդ կապակցությամբ:*

- Կմաղթեմ, որ հնարավորինս լավ սովորեն, քանի դեռ նրանց տրված է այդ հնարավորությունը: Սովորեն առանց թերանալու, հարստացնեն իրենց գիտելիքները. վաղ թե ուշ դրանք պետք են գալու աշխատանքային գործունեության մեջ: Հավատացեք, որ հետագայում սովորելու համար գրեթե ժամանակ չի մնում:

*Հեղինակ՝ Վարդինե Մեսրոպյան,  
Հոգեբանության ամբիոնի 1-ին կուրսի մագիստրանտ, ՀՀ ՊԿԱ ՈԻՆ մամուլի քարտուղար*





# ԱՊԱԳԱ ԿԱՌԱՎԱՐԻՉ



## ԵՂԻՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂ ԱՅՍՕՐ, ԴԱՐՁԻՐ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՂԸ

### ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Սերունդների հակամարտության, միմյանցից ունեցած ակնկալիքների և եկող սերնդի դաստիարակության մասին խոսել են բոլոր ժամանակներում: Հանրահայտ ճշմարտություն է, որ չարախոսները փիլիսոփա Մոկրատին դատապարտեցին մահվան՝ մեղադրելով նրան երիտասարդ սերնդին սխալ դաստիարակելու մեջ: Մոկրատը, որպես Աթենքի հավատարիմ քաղաքացի, խմեց թույնը և մահացավ: Դրանից հետո չարախոսներին ևս բանտարկեցին, իսկ դատավորին դատապարտեցին մահվան՝ սխալ որոշում կայացնելու համար: Մարդկությանը դաս եղավ այն, որ սերունդների միջև համագործակցության մշակույթի զարգացումը լավագույն զենքն է դիմակայել թշնամիներին և հզորացնել պետությունը: Համագործակցության մշակույթի զարգացման վրա հիմնված սերնդափոխությունը այսօր Հայաստանի Հանրապետության անվտանգության երաշխիքն է:

Ակնհայտ է, որ լինելով երկրի ապագայի տերը, երիտասարդությունը խնդիր ունի արդարացնել ավագ սերնդի սպասումները, և Աստված մի արասցե, որ ավագ սերունդը ունենա սպասումների հիասթափություն: Սպասումների բազմաբովանդակ հիմքում դրված է հետևյալ ակնկալիքը՝ գնահատել և չմերժել հինը, նորը ստեղծել հնի հիմքի վրա, քանի որ իրատեսական չէ կամ գոնե խիստ բարդ է ավերակների վրա երկիր կառուցելը: Իսկ մինչև նորի մասին խոսելը նախ տեսնենք, թե ինչ ունենք և ինչ հիմքի վրա մենք՝ երիտասարդներս, փորձելու նորը կերտել: Միայն չենք չենք լինի, եթե ասեմ, որ մեզ ժառանգված ամենամեծ արժեքն անկախությունն է, համենայնդեպս, ավագ սերունդն իր փոխանցած արժեքներից առաջինը դա է մատնանշում: Նրան հաջողվել է հայ մարդու դարավոր իղձը իրականություն դարձնել՝ ստեղծելով Հայոց անկախ պետականություն: Այստեղից էլ կարելի է ենթադրել, որ ներկա պայմաններում մեր առջև կանգնած գլխավոր մարտահրավերն անկախությունը պահելն է և այն մեր սերունդներին փոխանցելը: Եթե մեզ ժառանգվածը համեմատենք ամուր տուն կառուցելու հետ, ապա մենք ունենք քար, հենասյուներ, ցեմենտ և այլն... ուստի մեզ՝ ներկայիս երիտասարդությանը, մնում է ավարտել Հայոց Տան կառուցումը՝ հետամուտ լինելով նրա բարեկեցությանը և անվտանգությանը: Այսօր երիտասարդությունը իրեն նետված մարտահրավերների շրջանակում պարտավոր է զարգացնել և արդիականացնել սեփական տեսակի մրցունակությունը: Ակնհայտ է, որ միայն այդպես կարող ենք ոչ միայն դիմակայել մեզ պարտադրված իրական և վիրտուալ պատերազմներին այլև մարտահրավերներ նետել և կանխել անհանդուրժողականությունը: Այլապես բազում սերունդների ջանքերով ձեռք բերված անկախությունը կարող է դառնալ պատրանք...

Հետևաբար, այսօրվա երիտասարդության խնդիրն է զարգացնել և մրցունակ դարձնել իր ներուժը, քանի որ ռազմաքաղաքական ներկայիս վիճակը ենթադրում է ոչ միայն կոշտ ուժի ապահովում, այլև նոր սերնդի գիտելիքների առկայություն...

Իսկ թե ինչն է խանգարում հայ երիտասարդին, ով, ստանալով մրցունակ գիտելիքներ, նախընտրում է ապրել այլ երկրում, իր ներուժը ներդնել նրա զարգացմանը: Այս հարցը, ըստ իս, բազմակողմանի քննարկման կարիք ունի: Կոչ եմ անում բոլորիս երկխոսել Հայաստանի Հանրապետության անվտանգ ապագայի ապահովման շուրջ այսօրվա երիտասարդության ունեցած դերի մասին...



Հայկ Ղազարյան,  
Քաղաքագիտության ամբիոնի 1-ին կուրսի  
մագիստրանտ,  
ՀՀ ՊԿԱ ՈՒՄ փոխնախագահ





# ԱՊԱԳԱ ԿԱՌԱՎԱՐԻՉ



## ՀՀ ՊԿԱ ՈՒԽ ԿԱԶՄ

*Հայաստանի Հանրապետության պետական կառավարման սկադեմիայի Ուսանողական խորհուրդը ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման, նրա շահերը պաշտպանող ընտրովի մարմին է, որը հիմնադրվել է 2013թ.-ին:*

*Ուսանողական խորհրդի գործունեության նպատակներն ու խնդիրներն են՝*

- պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
- ապահովել ուսանողների մասնակցությունը Ակադեմիայի կառավարման մարմիններում,
- դրսևորել սեփական գիտելիքները և հնարավորությունները
- Ակադեմիայի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողության շահերին առնչվող հարցեր,
- մասնակցել Ակադեմիայի ներքին կարգապահական կանոնների պահպանմանը՝ իրազեկելով ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին,
- մասնակցել ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
- աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
- աջակցել ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործընթացին
- միավորել Ակադեմիայի ՈՒԽ-ի ջանքերը՝ ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը նպաստելու և ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացումը խթանելու նպատակով:



**Ջուլիետա Նիկողոսյան**  
ՈւԽ նախագահ



**Հայկ Ղազարյան**  
ՈՒԽ փոխնախագահ



**Օլյաննա Խուլբարյան**  
ՈւԽ քարտուղար



**Վարդիսե Մեարոյան**  
Մամուլի քարտուղար



**Անի Սարգսյան**  
Գիտակրթական հանձնաժողովի  
պատասխանատու



**Անի Բարսեղյան**  
Կազմակերպչական հանձնաժողովի  
պատասխանատու



**Սոնա Խաչատրյան**  
Մշակութային հանձնաժողովի  
պատասխանատու



**Անուիկ Ամբարջանյան**  
Սոցիալ-իրավական հանձնաժողովի  
պատասխանատու



**Տաթևիկ Սարգսյան**  
PR հանձնաժողովի  
պատասխանատու



**Արթուր Հայրապետյան**  
Սպորտի հանձնաժողովի  
պատասխանատու

**Հիմնադիր՝ ՀՀ ՊԿԱ ՈՒԽ**  
**Համարի պատասխանատու՝** Ջուլիետա Նիկողոսյան, ՀՀ ՊԿԱ քաղաքագիտության ամբիոնի 2-րդ կուրսի մագիստրանտ, ՀՀ ՊԿԱ ՈՒԽ նախագահ  
**Խմբագիր՝** Սոնա Խաչատրյան - ՀՀ ՊԿԱ հանրային կառավարման ամբիոնի 2-րդ կուրսի մագիստրանտ, ՀՀ ՊԿԱ ՈՒԽ մշակութային հանձնաժողովի պատասխանատու  
**Համակարգչային ձևավորումը՝** Արմինե Խաչատրյանի, ՀՀ ՊԿԱ հոգեբանության ամբիոնի 1-ին կուրսի մագիստրանտ, ՀՀ ՊԿԱ ՈՒԽ անդամ